



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ  
Ե. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 29 » 05 2019թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000041

**Ձեռնարկողը՝**

«Վալոդյա Գրիգորյան» ՍՊԸ  
գ. Մերձավան, Երևանյան խճուղի, 4-րդ նրբ. 13 փուն

**Գործունեությունը՝**

Մերձավանի քարամշակման արտադրամասի  
նախատեսման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվեքվություն  
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000041

<29> 05 2019թ.

**Մերձավանի քարամշակման արտադրամասի շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ**

Ձեռնարկող՝ <<Վալոդյա Գրիգորյան>> ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/  
Տեղադրման վայրը՝ Արմավիրի մարզի Մերձավան համայնք

<<Վալոդյա Գրիգորյան>> ՍՊ ընկերությունը նախատեսում է Մերձավանի վարչական տարածքում իրականացնել բազալտի հանքաքարի մանրացում՝ շինարարության մեջ օգտագործելու նպատակով: Տարածքը, որտեղ կազմակերպվելու է նախատեսվող գործունեությունը գտնվում է Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական սահմաններում, Երևանյան խճուղի 1 փողոց 5/4 հողամասում: Գործունեությունն իրականացվելու է արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերում, անշարժ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.6859հա հողամասում: Գործունեության ենթակա տարածքը խախտված է տարբեր տեսակի ընդերքօգտագործման աշխատանքներից, զուրկ է հողային ծածկույթից և բուսականությունից:

Տարածքի հարևանությամբ ներկայումս Մերձավանի և Փարաքարի բազալտների հանքավայրերում իրականացվում են շահագործման աշխատանքներ, գործում են քարամշակման արտադրամասեր, որոնց տարածքները նախատեսվող քարամշակման արտադրական հանգույցից գտնվում են 500-700մ հեռավորությունների վրա: Տարածքից մոտ 100 մ հեռավորության վրա առկա է ճանապարհ, որը կարող է արտադրական հանգույցի համար ծառայել որպես մոտեցնող ճանապարհ: Քարամշակման արտադրական տարածքը Մերձավան համայնքի ամենամոտ կառուցապատված տարածքից գտնվում է 500մ հեռավորության վրա: Արտադրական նպատակով ջրօգտագործումը նախատեսվում է իրականացնել Մերձավան համայնքի ջրամատակարարման ցանցից, որն անցնում է տարածքի հարևանությամբ:

Նախատեսվող գործունեության համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ: Տարբերակների դրական և բացասական վերլուծությունների արդյունքում ընտրվել է՝ ջրային եղանակով աշխատող ջարդիչների տեղադրումը: Ըստ ընտրված տարբերակի, կայանքի առավելագույն օրական արտադրողականությունը նախնական գնահատմամբ կկազմի 300 տ/օր: Քանի որ արտադրական սխեման բաղկացած է միայն ջարդման գործընթացից, արտադրանքի քանակը կլինի նույնը՝ 300 տ/օր: Տարեկան առավելագույն արտադրողականությունը կկազմի՝ 78000 տ/տարի: Պատվերների

բացակայության դեպքում ջարդիչ կայանքը չի շահագործվի, կամ կշահագործվի ավելի ցածր արտադրողականությամբ:

Տեղադրվող ջարդիչները շարժական են, գետնի մակերևույթին տեղադրվելու են որպես ժամանակավոր կառույց՝ մասնակի բետոնյա հիմքերի վրա: Յուրաքանչյուր ջարդիչի տակ տեղադրվելու է 4 հատ սյուն: Հիմքի մասում հարթակը զբաղեցնում է 2մx3մ չափեր:

Արտադրական հրապարակում, տեղադրվող ջարդիչների անմիջական հարևանությամբ նախատեսված է օպերատորի սենյակ, որտեղ սպասարկող անձնակազմի միջոցով կկարգավորվի և կհսկվի ջարդիչ հոսքագծերի աշխատանքը, ջարդման ենթակա խճի խոնավացման համար անհրաժեշտ ջրի առկայությունը և կիրականացվի պահակային ծառայություն: Տարածքում նախատեսված է նաև պահուստային ջրի տարողություն և տրանսֆորմատորային ենթակայան:

Ընկերությունը շինարարության համար պահանջվող տարբեր չափերի խճի ստացման համար նախատեսում է տեղադրել և շահագործել մի քանի տեսակի ջարդիչներ, այդ թվում՝ այտավոր ջարդիչներ՝ 2 գիծ, մաղ՝ 2 գիծ և կոնային ջարդիչ՝ 1 գիծ: Բոլոր հոսքագծերը բաղկացած կլինեն՝ բունկերից, ջարդիչից կամ մաղից, և ժապավենային փոխակրիչից: Նախատեսված հինգ հոսքագծերը կարգաբերված են տարբեր չափերի մասնիկներ ստանալու համար: Հումքի բաշխումն ըստ հոսքագծերի իրականացվելու է պատվերների բնույթից ելնելով:

Բազալտի հումքը բեռնատար մեքենաներով տեղափոխվելով բեռնաթափվում է ջարդիչների ընդունման հարթակ, որտեղից բեռնիչի միջոցով տրվում է բունկերի մեջ: Զուգահեռաբար միացվում է ջրի հոսքը և հանքաքարի խոնավացումը ջարդիչի մուտքի մասում թույլ է տալիս զգալի կերպով նվազեցնել փոշու արտանետումները: Բունկերից հանքաքարը ինքնահոս կերպով լցվում է ջարդիչի կոնների կամ գլանների մեջ, որտեղ իրականացվում է բազալտի մանրացումը: Մանրացված շինքարը խոնավ վիճակում ջարդիչից՝ փոխակրիչի միջոցով, բեռնվում է առաքման բեռնատարի մեջ: Պատվերի բացակայության դեպքում մանրացված հանքաքարը ժամանակավորապես կուտակվում է փոխակրիչի վերջնամասի մոտի հարթակում:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը պայմանավորված են՝ հումքի և արտադրանքի տեղափոխման հետ կապված և կարող են արտահայտվել՝ հանքաքարի ջարդման ընթացքում օդային ավազանի աղտոտմամբ, մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից պատճառվող անհանգստությամբ, աղմուկի մակարդակի ավելացմամբ և այլ ազդեցություններով:

Մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված է ջարդիչների աշխատանքով, որի արդյունքում առաջանում է անօրգանական փոշի: Զարդման գործընթացը ջարդիչ կայանքում իրականացվում է տեխնոլոգիական շղթայի միջոցով, որի կազմի մեջ մտնում են՝ բունկեր, ժապավենային սնիչ և ջարդիչներ: Արտանետումների հաշվարկները կատարվել են ըստ հանգույցների: Մեկ հոսքագծի տարեկան արտանետումները ընդհանուր կկազմեն 2.122 տ/տարի, կամ 0.2833 գ/վրկ, իսկ ընկերության ջարդիչ արտադրամասի տարեկան արտանետումները /5 հոսքագծերի համար/ ընդհանուր կկազմեն՝ 10.61 տ/տարի:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչային «Ռադուգա» ծրագրով: Համաձայն հաշվարկների արդյունքների՝ աղտոտվածության առավելագույն մակարդակը կազմել է՝ 0.207 մգ/մ<sup>3</sup>: Ինչը զգալիորեն ցածր է թույլատրելի նորմից: Գործունեության իրականացման արդյունքում մթնոլորտային օդին հասցվող տնտեսական վասը հաշվարկվել է 424400 դրամ/տարի:

<<ՎԱԼՈՂՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ>> ՍՊ ընկերության կողմից ջարդիչ կայանքի աշխատանքի համար անհրաժեշտ ջրօգտագործումն իրականացվելու է Մերձավանի



ջրամատակարարման ցանցից՝ հանքաքարի խոնավացման և սպասարկող անձնակազմի կենցաղային կարիքների համար: Արտադրական կարիքների ջրօգտագործումը ընդգրկում է ջարդիչի մուտքի մոտ հանքաքարի խոնավացումը և կուտակված հանքաքարի ու մանրացված քարի պահեստների ջրցանը: Այդ նպատակների համար տարեկան ծախսը հաշվարկվել է 198 մ3/տարի: Աշխատողների խմելու և կենցաղային պահանջների համար ջրածախսը կկազմի օրական՝ 0.116 մ3/օր: Տարածքում նախատեսված է տեղադրել նաև 1 հատ ջրի պահուստային տարողություն:

Արտադրական հրապարակում աշխատողների կենցաղային կարիքների համար նախատեսվում է անջրթափանց հոր, որտեղ կհեռացվեն կենցաղային կեղտաջրերը: Արտադրական հրապարակի ցածրադիր մասում նախատեսված է պարզարան, որտեղ կհեռացվեն անձրևաջրերը, կամ ջրցանից առաջացող արտահոսքերը: Պարզարանում կուտակված հոսքաջրերը կենթարկվեն մեխանիկական մաքրման, որից հետո պարզված ջրերը կրկին կարող են օգտագործվել արտադրական նպատակով:

Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հիմնական սոցիալական ազդեցությունները պայմանավորված են մեքենաների և տեխնիկայի տեղաշարժով և կարող են արտահայտվել փոշու և ծխագազերի արտանետումներով, աղմուկի առաջացմամբ, երթևեկության ավելացմամբ և այլ սոցիալական գործոնների հետ կապված: Սակայն հաշվի առնելով մոտակա բնակելի տարածքներից արտադրական տարածքի հեռավորությունը սոցիալական ազդեցությունները էական չեն լինի:

Գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական և հնարավոր սոցիալական ազդեցությունների կանխարգելման, կամ նվազեցման համար բնապահպանական կառավարման պլանում ներկայացվել է միջոցառումների ծրագիր, որոնք ներառում են.

- հանքաքարի ջարդիչների ջրամատակարարման համակարգի աշխատանքի անխափան ապահովումը,
- միաժամանակ ոչ ավելի, քան երկու հոսքագծի շահագործումը,
- տրանսպորտային միջոցների երթևեկության կազմակերպումը միայն ցերեկային ժամերին, դրանց մուտքի ու ելքի կայանման վայրերի սահմանում՝ հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու համար,
- հանքաքարի ստացման և արտադրանքի առաքման համար երթևեկության ժամանակացույցի մշակումը՝ երթևեկության ինտենսիվությունը չգերազանցելով 15 րոպեն մեկ երթ հաճախականությունը,
- պատվերների բացակայության ժամանակահատվածում, շոգ և քամոտ օրերին հումք տեղափոխող ճանապարհների և կուտակված խճի ջրցանը,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների /շարժիչների/ պարբերաբար ստուգումը, կարգաբերումը, տրանսպորտային միջոցների սպասարկումը միայն Մերձավանի մասնագիտացված կայաններում,
- արտադրական տարածքի հարևանությամբ կանաչ գոտու կազմակերպումը՝ բացառելու և կանխարգելելու նպատակով փոշու, աղմուկի տարածումը շրջակա տարածքներ,
- տարբեր տեսակի թափոնների /մետաղ, արտադրական թափոններ, օգտագործված յուղեր/ հավաքում, պահպանում հատուկ առանձնացված տեղերում և սահմանված կարգով հեռացում:

<<Վալոյա Գրիգորյան>> ՍՊ ընկերության կողմից արտադրական տարածքի հարևանությամբ նախատեսվում է իրականացնել կանաչապատման աշխատանքներ՝ ծառերի տեսքով /տնկվելու են պտղատու ծառատեսակներ, նախատեսվում են նաև արտադրական տարածքից բացառել փոշու տարածումը շրջակա տարածքներ: Այդ աշխատանքների համար նախատեսվող միջոցառումների ծախսերը կկազմեն մոտ



արտադրական տարածքից բացառել փոշու տարածումը շրջակա տարածքներ: Այդ աշխատանքների համար նախատեսվող միջոցառումների ծախսերը կկազմեն մոտ 150000 ՀՀ դրամ /որի մեջ մտնում են՝ տնկիների ձեռք բերումը, տնկումը, խնամքը/: Կանաչապատ տարածքների ոռոգումը և տարածքների ջրցանումը նախատեսվում է իրականացնել գործող ոռոգման ցանցի միջոցով, որն անցնում է տարածքի հարևանությամբ: Գնահատվել է ճանապարհների և արտադրական հրապարակի ջրցանի իրականացման համար նախատեսվող ծախսերը, որը տարվա կրվածքով գնահատվել է 200.000 դրամ:

Աղմուկի և տատանումների կառավարման համար արտադրական հարթակի տարածքում նախատեսված է իրականացնել աղմուկի մակարդակի մոնիթորինգ: Չափումների գործողության վայրը զգայուն ընկալիչներից ընտրվել է մինչև 250մ հեռավորության վրա: ՇՄԱԳ-ում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ թափոնների կառավարմանը, աշխատողների առողջությանը և աշխատանքի անվտանգությանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում քարամշակման արտադրամասի շահագործման հետ կապված հանրային քննարկումներ են անցկացվել Մերձավան համայնքում, որի ընթացքում նախատեսվող գործունեությունը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Եզրահանգում. ՇՄԱԳ-ում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

Գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է ապահովել ՇՄԱԳ-ում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացումը և մշտադիտարկման (մոնիթորինգի) պլանով նախատեսված շրջակա միջավայրի բաղադրիչների նկատմամբ գործողությունները և ժամանակացույցերը:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Վալոդյա Գրիգորյան>> ՍՊԸ կողմից ներկայացված Մերձավանի քարամշակման արտադրամասի նախատեսման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ.մասնագետ



*[Handwritten signature]*

Հ. Մկրտչյան